

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՅՅԱԼ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆ 2022-2023
ՊԵՍՏԻՑԻԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շրջանը ընդունել է Վնասատուների ինտեգրված կառավարման (IPM) քաղաքականություն: Այս քաղաքականությունը ներառում է ծնողներին/օրինական խնամակալներին տեղեկացնել թունաքիմիկատների օգտագործման մասին: Ուսումնական տարվա ընթացքում կարող է անհրաժեշտ լինել ձեր երեխայի դպրոցում թունաքիմիկատներ կիրառել վնասատուներից առաջացած առողջական լուրջ խնդիրներից խուսափելու և/կամ կառուցվածքի ամբողջականությունը պահպանելու համար: Այնուամենայնիվ, եթե դուք գգում եք, որ ձեր երեխայի կամ ձեր (դպրոցի անձնակազմի համար) առողջության և/կամ վարքի վրա կարող են ազդել թունաքիմիկատները, դուք կծանուցվեք հետևյալ կերպ.

- Հաստատված ցանկի արտադրանքը կարող է կիրառվել ուսումնական տարվա ընթացքում (տես կից թունաքիմիկատների ցանկը, որոնք հաստատվել են Շրջանի տեղամասերում օգտագործման համար):
- Այն դեպքում, երբ պահանջվում է օգտագործել այնպիսի ապրանք, որը չի գտնվում Հաստատված ցանկում, դուք կտեղեկացվեք 72 ժամ առաջ: (Բացառություն. Արտակարգ իրավիճակներ, որոնք պահանջում են անհապաղ արձագանքում):
- Թունաքիմիկատների վերաբերյալ հավելյալ տեղեկատվություն, ներառյալ Շրջանի Հաստատված ցանկում գտնվողները, հասանելի են առցանց՝ <https://www.cdpr.ca.gov/> հասցեով:

Խնդրում ենք լրացնել, անջատել և վերադարձնել ստորև բերված ձեր դպրոցի Գլխավոր գրասենյակ՝ նշելով, թե արդյոք ցանկանում եք նախապես ծանուցվել ամեն անգամ, երբ նախատեսվում է թունաքիմիկատների օգտագործումը դպրոցում:

ԵԹԵ ԿԻՐԱՌԵԼԻ Է, ԼՐԱՑՐԵՔ, ՍՏՈՐԱԳՐԵՔ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԵՔ ՍՑՍ ԲԱԺԻՆԸ ԴՊՐՈՑ



ԾԱՆՈՂՆԵՐԻ/ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՅՑՈՒՄ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ
2022-2023

- Ես կցանկանայի տեղեկացված լինել** ամեն անգամ, երբ դպրոցում թունաքիմիկատներ պետք է կիրառվեն (այսինքն՝ տարեկան ծանուցումից բացի): Ես հասկանում եմ, որ ծանուցումն իմ երեխայի հետ տուն կուղարկվի կամ ինձ կտրամադրվի դպրոցի անձնակազմի անդամի կողմից կիրառումից առնվազն 72 ժամ առաջ: (Բացառություն. Արտակարգ իրավիճակներ, որոնք պահանջում են անհապաղ արձագանքում):
- Ինձ պետք չէ ծանուցել** ամեն անգամ, երբ դպրոցում թունաքիմիկատներ պետք է կիրառվեն: Ես հասկանում եմ, որ ես տարեկան ծանուցում կստանամ դպրոցներում օգտագործման համար հաստատված թունաքիմիկատների մասին Ծնողի և աշակերտի ձեռնարկում կամ այլ միջոցներով:

Երեխայի անունը (տպագիր)՝ _____ Դասարան՝ _____

Դպրոց՝ _____ Սենյակի համար՝ _____

Ծնողի/օրինական խնամակալի անունը (տպագիր)՝ _____

Ծնողի/օրինական խնամակալի ստորագրությունը՝ _____ Ամսաթիվ՝ _____

Note to Site Administrator

File the original in the Main Office. If the above “I would like to be notified” box is checked, forward a copy of this notice via school mail to the Pest Management Unit at:

Maintenance and Operations Central 3 and Special Services
Attn: Pest Management Unit